

ուսցունել: Եթէ իմ բարեկամ էք, զինչ կամի առնել Թուման ձեզ՝ ինձ արասցէ և Երուսաղեմայ»: Այս խօսքերը զիւր չեկան իշխաններուն եւ ցաւեցան Եզրիազարի դէմ. ուստի եւ տարաձայնեցին թէ՛ «Թումա հակառակեցաւ Երուսաղեմայ և զԵրուսաղէմ հարկատու արար»: (Եր. 24. Օր. ՄՁ. Թ. 535):

ԹՈՎՄԱ ՎՐԴ. ԱՏԻՇՅԻ.—Մբ. 20. 1814 ին, կը վախճանի 1859 ին:

ԹՈՎՄԱ ՎՐԴ. ԲԱԲԵՐԴՅԻ.—Մբ. 1813 ին:

ԹՈՎՄԱ ՎՐԴ. ԲԱԼՈՒՅԻ.—Մբ. 1684 ին Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է Յայտնաւորք մը, որուն կէս մասն ալ գրած է Կիպրոսի Ս. Մակարի վանքին մէջ, ուր այժմ կը գտնուի ան: Զեռագրին յիշատակարանը նոյնութեամբ կը դնենք հոս. «Արդ կատարեցաւ սբ. գիրքըս: Ի թուականիս մերում ՌՃԼԳ (=1684) ի Կիպրոս կղզիս ընդ հովանեաւ սբ. և փառաւորեալ մեծապայծառ ածածնիս. և սրբոյն Մակարայ ձեռամբ անմիտ Թումայ արեղայիս, որ եմ ի գաւառէն Բալուա ուր տւաւ զիւր Հայոց մեծ վարդապետին Մեսրոպայ: Ի սբ. էմ. սկսեալ և եկեալ յաստ կատար և աւարտեցաւ ոպ. ցուցանէ զայն որ Եմայ. միարբան յիշէ զայնքանն անդ գրեցաւ և այն որ սբ. Մակարայ դուռն գրեցաւ, և եղաք յիշատակ ի դուռն սբ. ածածնայ եկեղեցուս մեզ և ամ. հաւատացելոց, որ և արժանի առնէք յիշելոյ զԹումայ արեղայս և զծնողս մեր զՄեղիտոսն և զմայրս մեր զՈսկին և զեղբարքս մեր զՀայրապետն և զԿարապետն և զՍաչատուրն և զքուրս մեր և զամ. արեան մերձաւորքս և մեզ զը. աշխատողացս... ամ. ողորմի Թումային և հօրն Միրիճանին և մօրն Մարթային և ամ. ընտանեացն քանզի կապելոյն խարճն սա ետ. ամ. ողորմի Եսայոյն որ զկտորիչն նորոգեաց»: (ROC. էջ 172-73): ՄՁ. Թ. 1920 Յայտնաւորքը նորոգած է Ս. Յակոբի մէջ:

ԹՈՎՄԱ ՎՐԴ.—Մբ 1726 ին:

ԹՈՎՄԱ ՎՐԴ.—Մբ. 1792 ին, Հրաւիրակ Ս. Յակոբի վանքին եւ ՏՅՊ. 1793 ին:

ԹՈՎՄԱ ՎՐԴ. ՊԱԼԱՏՅԻ.—Մբ. 1731 ին վախճանած է և թաղուած է Ս. Փրկչի վանքը. տապանագիրն է հետեւեալը. «Այս է տապան հանգստեան Պալատցի Թովմաս իմաստուն վարդապե-